# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ և ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-68/25-1

ք. Գյումրի

«29» հոկտեմբերի 2025 թ.

«Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ն, ի դեմս աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Մալխասյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ա/Ձ Բյուզանդ Փանոսյան»ը, ի դեմս տնօրեն Բյուզանդ Փանոսյանի, որը գործում է «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Թվով 4 ավտոմեքենաների ավտոպահեստամասերի ձեռքբերման և փոխարինման» ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2248260** (երկու միլիոն երկու հարյուր քառասունութ հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.
ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը,

իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[1]

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ

ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

ՀՀ ՖՆԳՎ

Հ/Հ 900212351192

ՀՎՀՀ 05511159

Կ. Մալխասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Ա/Ձ Բյուզանդ Փանոսյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Կոշտոյան փողոց, տուն 14/5

Ինեկոբանկ ՓԲԸ

Հ/Հ 2050161756191001

ՀՎՀՀ 57382923

Բ.Փանոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

*Հավելված 1*
*«29» հոկտեմբերի 2025թ. կնքված*
**ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-68/25** *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | **ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը** (ՀՀ դրամ) | Ընդհա-նուր քանակը | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 50111130/513 | **Տես Հավելված 1.1** /առդիր 1 էլեկտրոնային կրիչ/ | դրամ | 703500 | 1 | Ք. Գյումրի, Վարդանանց 1 | Պայմանագիրը (Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիրը) ուժի մեջ է մտնելու օրվանից 20 օրացուցային օր: |
| 2 | 50111130/514 | | դրամ | 693960 | 1 | Ք. Գյումրի, Վարդանանց 1 | Պայմանագիրը (Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիրը) ուժի մեջ է մտնելու օրվանից 20 օրացուցային օր: |
| 3 | 50111130/515 | | դրամ | 558000 | 1 | Ք. Գյումրի, Վարդանանց 1 | Պայմանագիրը (Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ համաձայնագիրը) ուժի մեջ է մտնելու օրվանից 20 օրացուցային օր: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 50111130/516 | | դրամ | 292800 | 1 | Ք. Գյումրի, Վարդանանց 1 | Պայմանագիրը (Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ **համաձայնագիրը**) ուժի մեջ է մտնելու օրվանից 20 օրացուցային օր: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ

ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

ՀՀ ՖՆԳՎ

Հ/Հ 900212351192

ՀՎՀՀ 05511159

Կ. Մալխասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ Բյուզանդ Փանոսյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Կոշտոյան փողոց, տուն 14/5

Ինեկոբանկ ՓԲԸ

Հ/Հ 2050161756191001

ՀՎՀՀ 57382923

Բ.Փանոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 1.1

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

| 2025թ․ նախատեսվում է հետևյալ ավտոպահեստամասերի ձեռքբերման և փոխարինման ծառայությունները | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակը/ ըստ չափաբաժինների | | | | | | | |
| 1-ին չափաբաժին | | 2-րդ չափաբաժին | | 3-րդ չափաբաժին | | 4-րդ չափաբաժին | |
| Nissan Pathfinder 4.0 մակնիշի ա/մ | | BMW X5 3,0 մակնիշի ա/մ | | Ford Fusion 2,5 մակնիշի ա/մ | | Mersedec-Benz C 180 մակնիշի ա/մ | |
| Ծառայության անվանում | գինը | Ծառայության անվանում | գինը | Ծառայության անվանում | գինը | Ծառայության անվանում | գինը |
| 4 հառանվառողերի փոխարինում նորով | 200000 | Կցորդման համակարգի ստուգում | 4000 | Բռնկման համակարգի ստուգում | 3000 | Շարժիչի յուղի և զտիչի փոխարինում | 26000 |
| Լուսային լամպերի փոխարինում նորով | 45000 | Բռնկման համակարգի ստուգում | 5000 | Բաշխիչ տուփի ստուգում | 3000 | Օդի զտիչի փոխարինում | 5000 |
| Արգելակման կոճղակների հավաքածուի ամբողջական փոխարինում նորով | 48000 | Բաշխիչ տուփի ստուգում | 8000 | Յուղի փոխարինում, զտիչի փոխարինում | 33000 | Ղեկային ունի հիմնական նորոգում | 25000 |
| Առջևի 2 հարվածամեղմիչների փոխարինում | 74000 | Շարժիչի յուղի փոխարինում | 49000 | Անիվների փոխարինում նորով | 135000 | Ղեկային կալունի ձգանների փոխարինում | 15000 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առջևի կառավարման թևի 2 առանցքակալի փոխարինում | 20000 | Սռնի գործիկի փոխարինում | 27000 | Ընդհանուր արգել ակման կոճղակների փոխարինում | 33000 | Անվադողերի փոխարինում | 120000 |
| Դիմացի կայ ունապարի փոխարինում նորով | 18000 | 4 անվադողերի փոխարինում | 180000 | Հակաառիչ նյութի փոխարինում նորով | 12000 | Մարտկոցի փոխարինում | 25000 |
| 2 կիսալ իսեռների փոխարինում նորով | 58000 | Արգել ակման կոճղակների փոխարինում | 66000 | Մարտկոցի փոխարինում նորով | 32000 | Արգել ակման սկավառակների փոխարինում | 40000 |
| 2 անվահանգուլցների փոխարինում նորով | 54000 | Դիմացի արգել ակման համակարգերի փոխարինում | 20000 | Առջևի 2 հարվածամեղմիչի փոխարինում | 66000 | Փոխանցման տուփի յուղի փոխարինում | 14000 |
| 2 ձգագողերի փոխարինում նորով | 18000 | Վանու ումայ ին ուժեղարարի փոխարինում | 30000 | Ղեկայ ունի հիմնական նորոգում | 28000 | Ծոծանակի /մայ անիկ/ փոխարինում | 12000 |
| 2 ձգաձողերի ծայ րակալ ների փոխարինում նորով | 22000 | Առջևի ցնցամեղմիչի փոխարինում | 27000 | Այ րման մոմիկների փոխարինում | 32000 | Հետևի հիմնարարի հենակների փոխարինում | 29000 |
| Շարժիչի 2 հենարանների փոխարինում նորով | 38000 | Հետևի զսպանակի փոխարինում | 23000 | Շարժիչի հենարանի փոխարինում | 80000 | Շարժիչի յ ուղի ռետինի փոխարինում | 12000 |
| 1 հաստոցի հաշվիչի փոխարինում նորով | 26500 | Ղեկայ ին կայ ունի ձգանների փոխարինում | 24000 | Ջրի հովացման համակարգի/ռադիատորի/ փոխարինում | 55000 | | |
| Շարժիչի յ ուղի և յ ուղի զտիչի փոխարինում ներառյ ալ | 49000 | Ղեկայ ունի հիմնական վերանորոգում | 33000 | Բոցամուղի կարգավորում | 8000 | | |
| Մեքենայ ի ընդհանուր կաչվե պատռի փոխարինում նորով | 29500 | Այ րման մոմիկի փոխարինում | 50000 | Առջևի ցնցամեղմիչի փոխարինում | 32000 | | |
| Հակաառիչ նյ ութի փոխարինում 8 լ իտր ծավալ ով | 14500 | Առջևի 2 ցնցամեղմիչի փոխարինում | 65000 | Հետևի հիմնարարի ռետինների փոխարինում | 44000 | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Շարժիչի գոտիի փոխարինում նորով | 9000 | Ինժեկտորի բոցամուղի մաքրում | 15000 | | | | |
| Մարտկոցի փոխարինում նորով | 28000 | Շարժիչի 2 հենարանների փոխարինում նորով | 54000 | | | | |
| | | Գնդե հոդակապերի փոխարինում | 10000 | | | | |
| | | Մարտկոցի փոխարինում | 44000 | | | | |
| | **751500** | | **734000** | | **596000** | | **323000** |

*Վերանորոգման ծառայություններն իրականացնել ըստ պատվիատուի պահանջի:

**Ծառայությունները պետք է մատուցվեն կա՛մ քաղաք Գյումրիում, կա՛մ Գյումրիից առավելագույնը 10-15կմ հեռավորության վրա գտնվող սպասարկման տարածքներում

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ

ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

ՀՀ ՖՆԳՎ

Հ/Հ 900212351192

ՀՎՀՀ 05511159

Կ. Մալխասյան

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Ա/Ձ Բյուզանդ Փանոսյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Կոշտոյան փողոց, տուն 14/5

Ինեկոբանկ ՓԲԸ

Հ/Հ 2050161756191001

ՀՎՀՀ 57382923

Բ.Փանոսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«29» հոկտեմբերի 2025թ. կնքված
ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-68/25 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/513 | Nissan Pathfinder 4.0 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | | | | | | | | | | | | | |
| 2 | 50111130/514 | BMW X5 3,0 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | Սույն պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: | | | | | | | | | | | | |
| 3 | 50111130/515 | Ford Fusion 2,5 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | Սույն պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: | | | | | | | | | | | | |
| 4 | 50111130/516 | Mersedec-Benz C 180 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | Սույն պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս: | | | | | | | | | | | | |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ | Ա/Ձ Բյուզանդ Փանոսյան<br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Կոշտոյան փողոց, տուն 14/5 |
| ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՀ ՖՆԳՎ | Հ/Հ 2050161756191001 |
| Հ/Հ 900212351192 | ՀՎՀՀ 57382923 |
| ՀՎՀՀ 05511159 | |
| Կ. Մալխասյան<br>-----------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Բ.Փանոսյան<br>-----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

« »
ծածկագրով

Պայմանագրի կողմ
________________
________________
գտնվելու վայրը ________
հհ ________________
հվհհ ________________

Պատվիրատու
________________
________________
գտնվելու վայրը ________
հհ________________
հվհհ________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ աս կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայ

| N | Մատուցված ծառայությունների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի |
| | | | | | | |
| | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսա ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձ բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
________________
ստորագրություն
________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդո
________________
ստորագրություն
________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3*
*«       »             20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ___________________________
հվհհ_________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«      » «              » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ____________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      » «                » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«    »        20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________-ի

Պատվիրատուի անունը                Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20    թ. ________________________ -ին կնքված N ________________________

պայմանագրի կնքման ամսաթիվը                պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

ներկայացուցիչ՝

**Ընդունեց**
հայտը նախագծած

*Հավելված N 4*
*«        »              20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ______________________-ի և ______________________-ի միջև «--»      20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                    կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

__________________-ի    միջև  «--»  20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

______________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»        20  թ.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-68/25-1 ծածկագրով 2025 թվականի հոկտեմբերի 29-ին կնքված պայմանագրի

ք.Գյումրի 29 **հոկտեմբերի** 2025թ.

Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ն ի դեմս աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կարեն Մալխասյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետև «Պատվիրատու»), մի կողմից, և «Ա/Ձ Բյուզանդ Փանոսյանի», ի դեմս տնօրեն՝ Բյուզանդ Փանոսյանի, որը գործում է «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետև՝ «Մատակարար»), մյուս կողմից, այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 29 հոկտեմբերի 2025թ. կնքված N **ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-68/25-1** ծածկագրով գնման պայմանագրի 7.1 և 7.16 կետի դրույթները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

### ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հետագա համագործակցության համար կողմերը որոշեցին «29» հոկտեմբերի 2025թ. հաստատել լրացուցիչ վճարման ժամանակացույց ըստ հավելված N2-ի, որի միջոցով հատկացվում են համապատասխան ֆինանսական միջոցներ վճարման ժամանակացույցով նշվող ծառայությունների և դրանց քանակների ձեռք բերման համար:
2. Սույն համաձայնագիրը համարվում է **ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-68/25-1** ծածկագրով պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերեն, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:
4. Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
5. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

**3 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ

ք. Գյումրի, Վարդանանց հր. 1

ՀՀ ՖՆԳՎ

Հ/Հ 900212351192

ՀՎՀՀ 05511159

Կ. Մալխասյան

-----------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Ա/Ձ Բյուզանդ Փանոսյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Կոշտոյան փողոց, տուն 14/5

Ինեկոբանկ ՓԲԸ

Հ/Հ 2050161756191001

ՀՎՀՀ 57382923

-----------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2

«29» հոկտեմբերի 2025 թ. կնքված

**ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-68/25-1** _ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

| Հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/513 | Nissan Pathfinder 4.0 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | X | | | | | | | | | | 703 500 | | 703500 |
| 2 | 50111130/514 | BMW X5 3,0 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | X | | | | | | | | | | 693960 | | 693960 |
| 3 | 50111130/515 | Ford Fusion 2,5 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | X | | | | | | | | | | 558000 | | 558000 |
| 4 | 50111130/516 | Mersedec–Benz C 180 մեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում: | X | | | | | | | | | | 292800 | | 292800 |

| |
|---|
| Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 15-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում **փաստացի մատուցված ծառայությունների** 100%-ի չափով՝ Վաճառողի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրերի և հաստատված ընդունման-հանձնման արձանագրությունների հիման վրա: |

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ | Ա/Ձ Բյուզանդ Փանոսյան |
| ք. Գյումրի, Վարդանանց հր. 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ |
| ՀՀ ՖՆԳՎ | Կոշտոյան փողոց, տուն 14/5 |
| Հ/Հ 900212351192 | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՎՀՀ 05511159 | Հ/Հ 2050161756191001 |
| Կ. Մալխասյան | ՀՎՀՀ 57382923 |
| _______________ (ստորագրություն) | _______________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |